

կը խարազանէ դիմացն եկածն . մարդ ալ կայ որ գայլի գլուխ անցուցած դէմքը՝ կ'ոռնայ այլանդակ : Այլ ընդունայն է համբերն , որովհետեւ ծայրը ճովթը չգար . ինչ կրնայ մարդ երեակայել նէ՝ թող երեակայէ , քիչ է շատ չէ : Ասոնց վրայ աւելցընելու է փողոցին մէջէն անցնող տեսակ տեսակ մտքէ չանցած դիմակաւորաց խուռն բազմութիւնը , որ կը ճաթեցընեն զմարդ ծիծաղեցընելէ . ասոնք խօսքով՝ ձեռքով ու գաւազանով կը նետուին կառաց մէջի դիմակաւորաց հետ , ու ըրածնին չմնար . կարծեմ՝ նոյն օրը Տիրերիս գետը գինի կը վազցընէ , ապա թէ ոչ ուրիշ կերպով անհնարին կ'երեւայ անոնց գինի բաւեցընելը :

Յետ այսպիսի զուարճութեան մը , որ ժամերով կը քչէ , թնդանօթներ կ'արծրկուին և ձիաւոր զինուորքեր կ'իյախին մէջ վերէն վար առջնին ելած կառքերը . քովի ճամբաները կը մոցընեն , որով քիչ ատենուան մէջ փողոցին ամբողջ երկայնութիւնը կը դարտրկի : Ան ատեն կըրկիւին ան ծայրն որ ժողովրդեան հրապարակը կը լմննայ , անհամբեր եռանդեամբ կը խխնջեն հինգ կտրիճ ձիեր , որոնց գեղեցկութեան զարդն իրենց ծածանող բաշերով փայլուն մորթն է . կ'ուզեն աշխոյժ կենդանիքն արշաւել խաղալ ու մրցանակն յափշտակել , բայց դիմացին չուան մը ձգուած է , որ կուրծքերնին կը հանգչի . տկար արգելք մը , որուն չեն կարող յաղթանակել : Իւրաքանչիւր ձիու տէրը քովը կեցած՝ ձայնիւ և շարժուածովք կը գրգռէ զանիկայ , կամ գինւով կը հարբեցընէ , և կամ պոչին տակ փուշեր դնելով՝ մոլեգնել կու տայ : Մինչդեռ երիվարները կրակէ աչքերով նշանի կը սպասեն , ձիաւոր զինուորաց պզտի խումբ մը կառքերը ցրուելէն ետքը՝ կը վազեն մինչև կրկիւսին միւս ծայրը՝ հրաման առնելու ձիարշաւի քաղաքական վարչութեան գլխաւորներէն , որոնք այն փողոցին ծայրը բարձր բազմոցի վրայ նստած են մասնաւոր բարձրաւանդակի վրայ : Հոն է ձիարշաւին նպատակն ու երեք մրցանակները , որոնք յաղթողաց

պահուած են : Հրամանը հասածին պէս՝ չուանը կ'արձրկուի ու անհամբեր ձիերը անհաւատալի երագութեամբ կը սրանան : ամեն տներէ ամեն աչք զանոնք կը փնտռէ . բարեբաղդաբար սպասելու առիթ չեն տար անոնք . աչքի թարթելու միջոցի մը մէջ դիմացէդ կ'անցնին՝ կարծես կրակէ թևերով , և մէջերնէն քաջագոյնը մղոնի մը երկայնութիւնը վայրկենի մը մէջ կտրելով՝ կը հասնի կը զարնուի վեկելոկոյ հրապարակը կախուած պաստառին ու հոն կանկ կ'առնէ : Իրեն նախանձորդ երիվարներն ետեւէն կը հասնին , բորբոքեալ ժողովրդեան յորդորանաց աղաղակներէն . իսկ միւս երկուքն իրենց անպտուղ արշաւանացը վարձք՝ կը սուլուին բազմութենէն : Այս պէս կը լմննայ բարեկենդանի իւրաքանչիւր օրերուն հանդէսը : Նոյն օրուան յաղթական ձին երկրորդ օրը պսակաւոր կը քալէ քաղաքին մէջ՝ խրոխտ վեհութեամբ մը ճօճելով գլուխը , և ամենուն գովութիւնն ընդունելով : Բարեկենդանի վերջին իրիկունը , կարծես թէ բարեկենդանը թաղելու դիտաւորութեամբ՝ տանց պատուհաններէն բազմութիւն ճրագներու դուրս կ'երկընցուին . այս տեսարանը ժողովրդեան շարժմունքն անոյշ դունով մը կը լուսաւորէ :

Մարդաշարոռքեամբ գողոռքիւն մը .

Գաղղիա դատաստանարանի մը մէջ կին մըն ալ եկեր էր վկայ ըլլալու . բազմութեան մէջէն պարոն մը՝ որ անոր առջևը նստեր էր , մարդավարութեամբ մը՝ իր տեղը անոր հրամցուց : Հոն աղէկ չէք տեսներ և ոչ ալ լսեր ըսաւ :

Բայց քանի մը վայրկեան հաղիւ անցեր էր , կինը ձեռքը գրպանը տանելով՝ չգտաւ իր քսակը , որուն մէջ 12 ֆր . և 50 սանդիմ կար : Աւելորդ է ըսել որ այն ազնուական մարդն՝ առանց սպասելու կնոջ շնորհակալութեանցը՝ աներևոյթ եղեր էր : Թէ որ յանդգնութիւն ունեցեր էր այն տեղը գողութիւն ընել՝ ուր դողերը կը պատժուին , գոնէ խեղդ ալ բանեցուցեր էր՝ պատժոյ ալ չսպասելու :